ծամեծ վնասս Հայոց ։ Եւ 'ի մատուցանել ժողովրդոց նոցին գիր աղաչանաց առ կուսակալն, մերժեաց զնոսա յատենէ իւրմէ ։ Այլ զկնի մեկնելոյ նորին յԵրուսաղեմէ՝ Հայք վերստին դիմեցին առ դատաւորն, յայտ արարին զպրկանս, մատուցին զվաւերական գրեանս սակս գերեզմանատան ։ Իսկ Լատինք մինչեւ ցայսօր ոչ դադարին 'ի թշնամութենէ, մատնելով զՀայս յիշխանութիւնս, 'ի բանութիւնս, 'ի տուժս և 'ի տուգանս, և հակառակեալ սեփհական ուխտատեղեաց և ստացուածոց նոցին, առիթ լինին մեծամեծ վնասուց, որպէս պատմեն զայս ամենայն այլազգիք Երուսաղէմի։ Ապա խնդրէ հրովարտակաւ բառնալ զնեղութիւնս և զտառապանս ազգին Հայոց, և վերստին դարձուցանել առ նոսա զմասն գերեզմանատան այնորիկ. ١١٩١ (1776)։

Միաբանք Հայոց տուին նաև հանրագիր 'ի մեծամեծացն այլազգեաց վասն այսր խնդրոյ, յայտնի վկայելով զյափշտակութիւնս Լատինաց, յոր ձեռնարկեալ կնքեցին ոգիք իբրեւ 30։ Գրեաց և Յովակիմ Պատրիարք գիր բողոքոյ 'ի Դուռն, առ Պատրիարքն և առ գլխաւորս ազգին 'ի Կոստանդինուպօլիս, և Զաքարիա Պատրիարք ընդ գրի իւրոյ մատոյց զայն 'ի Դուռն։ Լատինք եւս գրեալ էին ամբաստանութիւն զմիաբանութենէ Հայոց առ դեսպանն Գաղղիոյ, եւ նա եւս մատուցեալ էր 'ի Դուռն։ Լուեալ Արքայի զհանգամանս իրաց եւ տեղեկացեալ իսկ 'ի գրոց տուելոց յերկոցունց կողմանց։ Գրեցաւ հրովարտակ առ կուսակալն Դամասկոսի եւ առ դատաւորն Երուսաղէմի, ուր յետ 'ի մէջ բերելոյ զգիր գանկատանաց Տալիա դեսպանին Գաղղիոյ, անմիջապէս յարէ եւ զգիրս Պատրիարքացն Հայոց Երուսաղէմի և Կոստանդինուպօլսոյ, թէ ո՞րպէս յայտ առնէին սոքա վկայութեամբ այլազգեաց զսեփհականութիւնն Հայոց, և թէ ո՞րպէս նա ինքն կուսակալն գիր տուեալ է յառաջագոյն չհակառակիլ Լատինաց վասն այնր։ Սակայն դէնպէտն Երուսաղէմի, այն է Միւֆթին, զոր որսացեալ էին Լատինք 'ի կողմն իւրեանց, սակս ագահութեան իւրոյ խաբեալ զկուսակալն, զՀայս եւ զայլազգիս տուեալ է գանակոծել և վիրաւորել և զոմանս շղթայակապ մատնեալ 'ի բանտ և տուգանելով զնոսա՝ թափեալ է 'ի կարողութենէ. և թոյլ տուեալ Լատինաց գոր-